

յաջողութիւններով, որոնք մինչեւ հիմայ սքանչացում եւ երախտագիտութիւն կ'արթնցընեն սրտերու մէջ, հռչակաւոր դարձնա՞նք Գրիգոր պատրիարքի եւ Այնթապցի Եղիազար Կաթողիկոս-Պատրիարքի, մեծագործութիւններէն ետքը։¹

դեռ պատրիարքական Աթոռներու վրայ ալ Ամրտունք եւ Մշոյ Ս. Կարապետին նկատմամբ։

«Յիսուսի Քրիստոսի ծառայք եւ տեղապահք քրիստոսագիր Սրբոյ եւ մեծի գերագրական Աթոռոյն Սրբոյն Յակոբայ Տեառնեղբոր եւ Սրբոյն Յակոբայ Գլխադրի, եւ Եւստաքէի Առաքելաշնորհ Աթոռոյն Կոստանդինուպոլսոյ, եւ անպիտան սպասաւորք ամենայն աստուածաՀոտ տեղեացն տնօրինականաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ յերուսաղէմ, եւ Ս. Կարապետի շնորհաբաշխ գերեզմանին Աւելածուք եւ աշակերտք Տեառն Վարդանայ Մեծի վարդապետի եւ քաջ Հռետորի, Գրէգոր եւ Յովնան մեղապարտ վարդապետք...»

Այս կոնդակը հրատարակելու ատեն դիտել տուած էի թէ Կոլոտին կնիքը կը կրէր ՌՃԾԷ (= 1708) թուականը եւ «Յիսուսի Քրիստոսի ծառայք Յովնան Վարդ. Բռնիւշէն դիրք. իսկ Շղթայակիրնը, «Ե. Յիսուսի Քրիստոսի ծառայք Գրէգոր Վարդապետ Ամրտունք եւ Պարտիք Սրբի Սուրբայ ՌՃԿԶ» (= 1717)։ Ասկից կը հետեւի որ Կոլոտիւր հին կնիքը կը գործածէր, իսկ Շղթայակիր իր պատրիարքութեան առթիւ փորագրել տուած է նոր կնիք մը, որուն թուականին ճշդութիւնը կը հաստատէ պատմութեան թուականը (1717)։

1 Գրէգոր Ե. Պարոն Տէր Մարգարեան, վարեց Երուսաղէմի պատրիարքութիւնը 1613—1645։ — Եղեղաբ Ա., որ ժամանակի ամենէն ազդեցիկ ու ամենէն նշանաւոր դէմքն է. 1651—52 պատրիարք Կ.Պոլսոյ։ — 1663—1682 Պատրիարք Երուսաղէմի եւ Կաթողիկոս Հայոց։ 1682—1691 Օգոստոս՝ Կաթողիկոս Հայոց ի Մայր-Աթոռ։ — Գրէգոր Զ. Շղթայակիր 1715—1749։ Գրիգոր Պարոն Տէր եւ Գրիգոր Շղթայակիր մինչեւ հիմայ կը յիշատակուին Երուսաղէմ պատարագի ատեն «Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք», քարոզին մէջ՝ Հմմտ. Յաջորդութիւն պատրիարքաց Երուսաղէմի, էջ 52—56, 60—61։